

**ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅԻ ԵՎ ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԻ
ՀԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

ԱՐՄԻՆԵ ՉԱԳԻՆՅԱՆ

Անորոշ դերբայը, բնորոշ լինելով հայ քերականական ավանդույթներից, հնդեվրոպական այլ լեզուներում համապատասխանում է **ինֆինիտիվին**: Ստորև հիմնականում գործածում ենք **անորոշ դերբայ** գիտաբանը, և միայն այն դեպքում, երբ ինֆինիտիվ կառույցներն ընդհանրական բնույթ չեն կրում և ամենևին չեն համապատասխանում անորոշ դերբայի դրսևորումներին, պահպանում ենք ինֆինիտիվ եզրը:

Լինելով բայական համակարգի անբաժանելի մասը՝ անորոշ դերբայը դերբայական մյուս ձևերի հետ մեկտեղ հակադրվում է դիմավոր բայի կերպաժամանակային ձևերին: Նրա և դիմավոր բայի հակադրությունը հիմնված է որպես տարբերակիչ հատկանիշ հանդես եկող դիմավորության վրա:

Հայտնի է, որ անորոշի հիմնական առանձնահատկությունը դեմքի քերականական կարգի և նրա հետ պայմանավորված թվի ու ժամանակի քերականական կարգերի հանդեպ չեզոքությունն է, որն ասելիքը դարձնում է ավելի ընդհանրական ու վերացական: Թերևս սա է պատճառը, որ շատ լեզվաբաններ, ինչպես օրինակ՝ Լ. Տենիերը, անորոշը համարում են ճապաղ, փոփոխական և դժվարությամբ որսացվող մի երևույթ և այդ հանգամանքով էլ պայմանավորում նրա գործածության շրջանակի նեղացումը¹:

Սակայն լեզվական համակարգում առկա է նաև հակառակ միտումը, երբ անորոշը գործածվում է դիմավոր բայի փոխարեն՝ ստանձնելով նրա գործառնությունը: Ռա չի նշանակում իհարկե, թե այն կարող է լիովին փոխարինել դիմավոր բային: Հայտնի են բավականին շատ սահմանափակումներ՝ կապված թե՛ դիմավոր բայի, թե՛ անորոշի բաշխման հետ, որն իր հերթին պայմանավորված է այն ստորոգական կառույցի արժույթով և իմաստային դաշտի պատկանելությամբ, որի համար որպես պարտադիր կամ ոչ պարտադիր ակտանտ է հանդես գալիս անորոշը: Այսպես՝ գրաբարում անորոշը հաճախ գործածվում է եղանակավորիչ (մոդալ) արժեք ունեցող բայերի հետ, ինչպես՝ կարողական (**զօրեն, կարողանամ**), կամական (**ախորժեմ, կամիմ, հաւանիմ, յօժարեմ**), ցանկական (**կարօտանամ, ցանկանամ**), ձգտման (**ժտիմ, իշխեմ «հանդգնել», ջանամ, փութամ**), պատճառական (տալ բայով), անցումային-ինքնատիվ (**սկսանիմ, դադարեմ**) և այլն²:

Մյուս կողմից՝ անորոշի և դիմավոր բայի հակադրությունը շատ հաճախ կախված է քերականական այնպիսի երևույթից, ինչպիսին քողարկված ենթական է: Ն. Խոմսկին այն անվանում է դատարկ կարգ, քանի որ այն արտահայտության պլանում չի իրացվում³:

¹ Տե՛ս **Tesnière L.** *Éléments de syntaxe structurale*, Paris, 1959, էջ 434, հմմտ. **Գ. Բ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 511:

² Հմմտ. **Թ. Շահվերդյան**, Գրաբարի դերբայները, Ձևաբանություն և շարահյուսություն (ըստ Եզնիկ Կողբացու լեզվանյութի), Եր., 2001, էջ 36-50:

³ Տե՛ս **Haspelmath M.** *Kontrolle und Subjektausdruck bei Infinitiven und Konverben*, in "Infinitive. Sprachtypologische Studien, Herausgegeben von Utz. Maas, Osnabrück, 1997, էջ 66:

Ընդհանուր առմամբ, անորոշ դերբայի գործածության շրջանակն ավելի սահմանափակ է, քան դիմավոր բայինը: Այն կարող է փոխարինել դիմավոր բային, երբ կան նրա քողարկված ենթական և հիմնական բայի ենթական է նույնը, կան նրա քողարկված ենթական և հիմնական բայի խնդիրը, օրինակ՝ եղանակավորիչ բայերի հետ կան ուղիղ խնդրի հետ միասին բացառական կամ տրական հոլովով խնդիր պահանջող եռարժույթ բայերի դեպքում, ինչպես՝ *պահանջել նրանից ներկա լինել, աղաչել նրան զթալ* և այլն⁴:

Ի տարբերություն բայի այլ անդեմ ձևերի, որտեղ քողարկված ենթական հեշտությամբ կարող է դառնալ ոչ քողարկված, անորոշ դերբայով կառույցների դեպքում ուղղական-ենթակա չի լինում՝ բացառությամբ դիմավոր ինֆինիտիվների⁵:

Այսպիսով՝ անորոշի ենթական կարող է միայն թեք հոլովածներով հանդես գալ, քանի որ այդ կառույցները նախապես առաջացել են վերավերլուծության (Reanalyse) միջոցով, այլ կերպ՝ նրա քողարկված ենթակայի թեք հոլովածն էր ծագումնաբանորեն պայմանավորված է գլխավոր նախադասության բայով⁶:

Իհարկե, կան նաև այնպիսի դեպքեր, երբ անորոշը անկախ քողարկված ենթակայի գոյությունից գերիշխում է: Այդպիսիք են, օրինակ, որպես անվանական ստորոգյալ հանդես եկող ածականների և վերացական գոյականների հետ գործածվող կառույցները, որտեղ բովանդակությունը ներկայացվում է վերացականորեն: Դրանք հակադրվում են ոչ միայն դիմավոր ձևերին, այլև գոյականին կամ բայանվանը, օրինակ՝

***Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,
զգալ, որ դու կաս և լինել հեռու (Տերյան):
Keine Kunst ist es alt zu werden,
Es ist Kunst es zu ertragen (Goethe).***

Եթե բովանդակությունը վերացական է ներկայացվում, ապա անորոշ դերբայ-դիմավոր բայ հակադրության մեջ ոչ նշույթավորված է առաջինը:

Անորոշ դերբայի և դիմավոր բայի հակադրությունները ի հայտ են գալիս, երբ անորոշը կամ նրանով կազմված կառույցը կատարում է ենթակայի, խնդրի, բաղադրյալ բայի բաղադրիչի, պարագայի պաշտոն՝ մրցակցելով դիմավոր բայի հետ կան պարզ նախադասության, կան երկրորդական նախադասության կազմում:

Հարկ է նկատել նաև, որ ժամանակագրական տեսանկյունից անորոշ դերբայի գործածության շրջանակն ավելի լայն է հին լեզուներում, քան ժամանակակից, որն էլ հուշում է, որ նախկինում այն ամրացված չէր իր հիմնական գործառնություն և դեռևս ինքնուրույն գործածություն չունեցր, այսինքն՝ չէր ընկալվում որպես գործողության անվանում: Անորոշով բացարձակ կառույցները, որոնք հատուկ են այնպիսի լեզուների, ինչպիսիք են հին հունարենը, լատիներենը, գոթերենը, հին հայերենը և այլն, ժամանակակից լեզուներում հիմնականում փոխարինվում են գլխավոր կամ երկրորդական նախադասության դիմավոր բայով:

Անորոշից դիմավոր բային անցումը նույնպես հաճախ պայմանավորված է քողարկված ենթակայով, որի՝ անորոշի հետ միասին արտահայտած

⁴ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 484-485:

⁵ Տե՛ս Haspelmath M. նշվ. աշխ., էջ 73:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 73-74:

դիմավորության իմաստը այլ ձև է ստանում: Այդ է պատճառը, որ դիմավոր ձևի են առավելապես վերածվում քողարկված ենթակա ունեցող կառույցները, ինչպես, օրինակ՝ եղանակավորիչ բայերով կամ անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցները: Ընդ որում, դիմավոր ձևերի են վերածվում հատկապես այն կառույցները, որոնց քողարկված ենթական չի համընկնում նախադասության բուն ենթակայի հետ: Այդ միտումը ունի ընդհանուր տիպաբանական բնույթ և հատուկ է շատ լեզուների, այդ թվում նաև հայերենին: Եթե փորձենք համեմատել հայերենի զարգացման տարբեր շրջաններում անորոշի գործածության շրջանակները, ապա կտեսնենք, որ հիմնականում դիմավոր ձևերի են վերածվել վերոհիշյալ բացարձակ կառույցները, ինչպես նաև՝ **ուզենալ, կամիլ, թողուլ, հրամայել, թույլ տալ + անորոշ դերբայ** կառույցների դեպքում և այլն, որտեղ հիմնականում անորոշի ենթական և ասույթի ենթական տարբեր են⁷: Ընդ որում, որպես կանոն, այստեղ փոխարինելու է գալիս երկրորդական նախադասությունը, օրինակ՝ **Կու հրամայէ օրէնքն, որ գրահանայի տուն և ապրանք չզնէ այլ ոք**⁸:

Իսկ երբ ենթական նույնն է, ապա ընդհանուր տիպաբանական տվյալների համաձայն մենաթեքայնությունը երկբայ շարույթում գերազանցում է երկթեքայնությանը (**ուզում են անել, և ոչ թե՛ ուզում են անեն**)⁹:

Տարածամանակյա հայեցակետից անորոշի և դիմավոր բայի հակադրությունների չեզոքացման հետևանքով ընդհանուր առմամբ ի հայտ են գալիս բալկանյան ինֆինիտիվը, դիմավոր ինֆինիտիվը, ինչպես նաև տեղի է ունենում անորոշը հայցականի, ուղղականի կամ տրականի հետ կառույցների վերածում դիմավոր ձևերի:

Ինչպես և անվանումն է հուշում, բալկանյան ինֆինիտիվը վերաբերում է բալկանյան թերակղզու լեզուներին, այսինքն՝ բալկանյան լեզվամիությանը, որտեղ ինչ-ինչ պատճառներով ինֆինիտիվը ժամանակի ընթացքում վերածվել է պայմանական եղանակով արտահայտված դիմավոր բայի:

«Բալկանյան ինֆինիտիվ» անվանումը ձևաբանական տեսանկյունից փոքր-ինչ ճիշտ չէ, քանի որ այն այնուամենայնիվ հանդես է գալիս որպես դիմավոր բայ: Սյուս կողմից՝ անվանումը մասամբ արդարացնում է իրեն, քանի որ դիմավորությունն այստեղ սահմանափակվում է միայն ներկա ժամանակով, թեև շրջասական եղանակով հնարավոր է արտահայտել նաև վաղաժամություն և կրավորական սեռ¹⁰: Բալկանյան ժամանակակից լեզուներում ինֆինիտիվից զուրկ են հունարենը, տոսկյան ալբաներենը, մակեդոներենը, մինչդեռ գեգյան ալբաներենը, ռումիներենը, ինչպես նաև սերբերենի որոշ բարբառներ սահմանափակ թվով են կիրառում այն¹¹:

Բալկանյան ինֆինիտիվի ծագման մասին գոյություն ունեն տարբեր տեսակետներ, այդ թվում՝ բազմածագում և միածագում: Եթե բազմա-

⁷ Տե՛ս Պ. Կ. Վարդապետյան, Շարահյուսություն, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Եր., 1975, հ. Բ, էջ 209:

⁸ Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գունդստաբլի), Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի, ձեռագրի համեմատութեամբ լրյա ընծայեց վարդապետ Ղլտճեան, Էջմիածին, 1918, էջ 44:

⁹ Տե՛ս Գабинский М. А. Появление и утрата первичного албанского инфинитива. Л., 1970, էջ 239:

¹⁰ Տե՛ս Haase M. (In-) Finitivkonstruktionen. Baskisch und Romanisch, in: "Infinitive. Sprachtypologische Studien", Herausgegeben von Utz. Maas, Osnabrück, 1997, էջ 49:

¹¹ Տե՛ս Thümmel W. Infinitivsubstitute in den Balkansprachen – ein Fall von Kongruenz, in: "Infinitive. Sprachtypologische Studien, Herausgegeben von Utz. Maas", Osnabrück, 1997, էջ 101:

ծագման տեսության հեղինակները հիմնականում հենվում են ինֆինիտիվի՝ որպես ընդհանուր լեզվաբանական երևույթի իմաստային անլիարժեքության վրա, ապա միածագման տեսությունները կամ ելնում են հունարենից (Յ. Պեդերսենը, Գ. Մեյերը, Կ. Սանդֆելդը, Պ. Բյուրգերը, Գ. Ռոլֆսը, Դ. Կոպչազը), կամ ընդհանուր ենթաշերտի գաղափարից, հատկապես թրակերենի (Ա. Ռոսետի), որը զուրկ է եղել ինֆինիտիվից և որից ենթադրաբար բխեցվում է ալբաներենը¹²:

Իհարկե, առավել ընդունելի է հունական ծագումը: Բանն այն է, որ Նոր Կտակարանում և Հռոմեոսի ստեղծագործություններում արդեն նշմարվում է պայմանականի մրցակցությունը անորոշի հետ: Սա էլ ցույց է տալիս, որ անորոշի կորստի միտումը հունարենում ավելի շուտ է վկայվել քան բալկանյան որևէ լեզվում¹³:

Անորոշի կորուստը հունարենում հիմնավորվում է և՛ ձևական, և՛ իմաստային տեսանկյունից: Եթե ձևական առումով այն բխեցվում է հնչյունական փոփոխություններից, ապա իմաստային առումով՝ կամ որպես նպատակի պարագա հանդես եկող ինֆինիտիվ կառույցից, կամ հայցականը անորոշի հետ կառույցների գոյությունից այդ լեզվում:

Ինչ վերաբերում է հնչյունական փոփոխություններին, ապա սրանց հետևանքով հունարենի անորոշը համանուն դարձավ այլ քերականական ձևերի: Այսպես, ըստ Ֆ. Միկլոշիչի՝ անորոշի v- ցուցիչի անկումը շարակարգում հանգեցրեց նրա ընկալմանը որպես երրորդ դեմքի եզակի թվի ձև, որը փոփոխություններ բերեց նաև այլ դեմքերում և թվերում: Սրան նպաստեց նաև այն, որ համաբանության ենթարկվեցին սահմանական եղանակը, դ-ով պայմանականը, քանի որ ε-ի անցմանը, որն արդեն նշմարվում էր մ. թ. ա. III- II հազարամյակներում, միացավ նաև դ-ի անցումը: Այս գործընթացը ավարտվեց մ. թ. II դարում: Այսպիսով՝ հունարենում v-ի անկումով և տարբեր հնչյունների իտացիզմի հետևանքով ներկա ակտիվ անորոշը՝ -εiv -ով դարձավ համանուն 3-րդ դեմքի ներգործական սեռի երեք եղանակներին՝ սահմանականին, որի վերջավորությունն է -εiv, պայմանականին՝ -դ վերջավորությամբ, և ըղծականին՝ -οiv վերջավորությամբ: Քանի որ ըղծականը չի դիմանում պայմանականի մրցակցությանը, ապա մրցակցում են անորոշն ու պայմանականը, իսկ ավելի ուշ անորոշը զիջում է իր դիրքերը¹⁴:

Բալկանյան ինֆինիտիվը որպես նպատակի պարագա հանդես եկող ինֆինիտիվ կառույցից բխեցնում է, օրինակ, Խ. Բարիչը¹⁵: Այս տեսակետին է հարում նաև Բ. Սերբերենիկովը, որը ընդհանուր տիպաբանական բնույթ է վերագրում նրան: Ըստ նրա՝ քերականական այն կարգերն ու ձևերն են հիմնականում այլ ձևերով փոխարինվում, անհետանում կամ այլ ձևերի հետ բաղադրության ենթարկվում, որոնց արտահայտած իմաստը շատ հաճախ կրկնում է այլ ձևերի իմաստը, կամ էլ որի իմաստային ծավալը չափազանց մեծ է: Նպատակի պարագա երրորդական նախադասությունները սովորաբար արտահայտում են ոչ իրական, պլանավորվող և ցանկալի գործողություն, որի պատճառով էլ այդ իմաստը արտահայտում են հենց նույն իմաստն ունեցող տարբեր թեք եղանակաձևերը: Բացի այդ՝ անորոշն ու պայ-

¹² Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 160-308:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 298, 242:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 247-256:

¹⁵ Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 192:

մանականի դիմավոր ձևերը ունեն իմաստային որոշակի համընկնումներ: Նրանք երկուսն էլ արտահայտում են ապագայի գործողություն¹⁶:

Տարբեր լեզուներում նկատելով նպատակի պարագա երկրորդական նախադասություններում թեք եղանակաձևերի գործածման միտումը՝ Բ. Սերեբրեննիկովը եզրակացնում է, որ ամենից հաճախ այս դեպքում գործածվում է պայմանականը (հին հունարենում, լատիներենում, հին ռուսերենի գրավոր հուշարձաններում, ժամանակակից պարսկերենում, որը գալիս է դեռևս միջին պարսկերենից, օսերենում, ինչպես նաև հին վրացերենում), ըղծական եղանակը (թուրքական լեզուներում), ըղծական եղանակից առաջացած պայմանական եղանակը (ֆիններենում, էստոներենում, բալթյան լեզուներում), հրամայական եղանակը (հունգարերենում)¹⁷:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ անորոշի կորուստը հունարենում բխեցվում է անորոշը հայցականի հետ կառույցների գոյությունից տվյալ լեզվում: Այսպես՝ ընդունելով Տոգեբյուլի այն տեսակետը, որի համաձայն հին հունարենի կերպաժամանակային ձևերի հարացուցայնությունը (11 ձև) իր մեջ կրում է անորոշի վերացման սաղմը¹⁸, Սերեբրեննիկովը այն կապում է իր իմպլիկացիոն օրենքի հետ, որի համաձայն անորոշի մեծ քանակությունը լեզվում կախված է տվյալ լեզուներում հայցականը անորոշի հետ կառույցների առկայությունից, ինչպես օրինակ՝ լատիներենում, կամ հին հունարենում¹⁹: Այսպիսով՝ եթե անորոշի մեծ քանակությունը լեզվում պայմանավորված է տվյալ լեզուներում վերոհիշյալ բացարձակ կառույցների գոյությամբ և եթե հաշվի առնվի այդ կառույցի՝ որպես տեխնիկապես անհարմար լեզվական միջոցի օրինաչափ անհետացումը, ապա անորոշի հարուստ համակարգի և նրա անհետացման միջև կարելի է և որոշակի կապ հաստատել²⁰:

Ժամանակակից հունարենը լիովին է կորցրել հին հունարենին բնորոշ ինֆինիտիվի ժամանակային և սեռային քերականական ձևերով հարուստ հարացույցը: Նոր հունարենում անգամ այնպիսի նախադասության մեջ, ինչպիսին է՝ *Η Αλεξάνδρια θέλει να επισκευτεί τον παππού του*. «**Ալեքսանդրիան կցանկանար այցելել պապիկին**», *επισκευτεί (այցելել)* բայը հանդես է գալիս ոչ թե անորոշի, այլ պայմանականի ձևով, որը -*να*(որ) շաղկապով կապվում է գլխավոր նախադասության հետ²¹:

Բալկանյան ինֆինիտիվի բանաձևն է՝ $V_{[+FIN]} + SR + V_{[+FIN, +KNJ]}$, որտեղ SR-ը ստորադասական մասնիկն է: Այս ստորադասական ցուցիչը ինքնին չի կարող ընկալվել որպես շաղկապ, քանի որ այն միշտ դրվում է բայից առաջ: Այդ պատճառով էլ այն դիտարկվում է որպես պայմանականի խոնարհման ցուցիչ:

Ըստ Մ. Հասսեի՝ բալկանյան ինֆինիտիվի ծագումը դասական քերականացման գործընթացի արդյունք է: Այստեղ տեղի է ունենում պայմանական կառույցի ձևայնացում, որտեղ շաղկապը վերածվում է ստորադասական բառի կամ պայմանականի ցուցիչի, իսկ պայմանականի

¹⁶ Տե՛ս Серебренников Б. А. Вероятностные обоснования в компаративистике. М., 1974, էջ 233-246.

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 231-233:

¹⁸ Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 231-232:

¹⁹ Տե՛ս Серебренников Б. А. նշվ. աշխ., էջ 304:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 344-345:

²¹ Տե՛ս Haspelmath M. նշվ. աշխ., էջ 77:

թեքված ձևերը ի վերջո դառնում են իսկական դիմավոր ձևեր: Այս քերականացված պայմանական կառույցի՝ լայն տարածում գտնելու հետևանքով իսկական ինֆինիտիվը դուրս է մղվում գործածությունից²²:

Դիմավոր ինֆինիտիվը, որն այլ կերպ անվանում են կիսաինֆինիտիվ (սեմիինֆինիտիվ), հատուկ է պորտուգալերենին, ինչպես նաև Չարավային Իտալիայում խոսվող սարդիներենին և հին նեապոլիտաներենին: Պորտուգալերենին բնորոշ է և՛ սովորական ինֆինիտիվը, և՛ կիսաինֆինիտիվը: Որպես կանոն սովորական ինֆինիտիվը հանդես է գալիս եղանակավորիչ (մոդալ), կիսաեղանակավորիչ (կիսամոդալ), անցումային-ինքնատիվ-տևական, նպատակի իմաստ արտահայտող, շարժում ցույց տվող բայերի դեպքում: Իսկ դիմավոր ինֆինիտիվը հանդես է գալիս նրա բացարձակ կիրառության դեպքում: Երբեմն էլ՝ կախված ոճից, երկուսն էլ թույլատրելի են²³:

Պորտուգալերենում և սարդիներենում դիմավոր ինֆինիտիվը հանդես է գալիս՝

- 1) **տեսնել, լսել** բայերից հետո,
- 2) **ասացական** բայերից հետո,
- 3) **նախդիրներից** հետո (ավելի հաճախ):

Դիմավոր ինֆինիտիվի առանձնահատկությունն այն է, որ զուգակցում է անվանական և բայական հատկանիշները: Օրինակ՝ պորտուգալերենում այն ունի հետևյալ տեսքը՝

*O louvares-me tu me causa novidade*²⁴. «*Այն, որ դու ինձ գովում ես (կամ քո գովելը), ինձ զարմացնում է*»:

Այստեղ ինֆինիտիվը գոյականի նման օժտված է հոդով և հանդես է գալիս որպես նախադասության ենթակա: Դիմավոր բայի նման էլ այն ունի դիմավոր վերջավորություն, ինչպես նաև **tu** ենթական, և ուղիղ խնդիր՝ արտահայտված **me** դերանվամբ:

Դիմավոր ինֆինիտիվը պորտուգալերենում հիմնականում կիսում է անդեն ինֆինիտիվի գործածության շրջանակը՝ բացառությամբ քարացած կառույցների:

Այսպիսով, դիմավոր ինֆինիտիվի հիմնական շարահյուսական գործառույթը ստորոգման գործառույթն է, որը սակայն մշտապես զուգակցվում է այլ շարահյուսական գործառույթի հետ: Պորտուգալերենում դիմավոր ինֆինիտիվը կարող է հանդես գալ նախադասության տարբեր անդամների գործառույթով, ինչպես օրինակ՝ ենթակայի, ուղիղ խնդրի, նախդրով կամ աննախդիր լրացման, պարագայի, **a+** **ինֆինիտիվ** կառույցում, որը փոխարինում է գերունդիումին, ինչպես նաև՝ անորոշը հայցականի հետ դարձվածում²⁵:

Դիմավոր ինֆինիտիվով կառույցներում որպես կանոն ինֆինիտիվի ենթական չի համընկնում ասույթի ենթակայի հետ, այսինքն՝ պորտուգալերենում բացարձակ կարող է լինել ինֆինիտիվով ցանկացած կառույց՝ պարագայական, որոշիչ, լրացական և այլն, որը, ըստ էության, փոխարինում է երկրորդական նախադասություններին: Դիմավոր ինֆինիտիվը մի կողմից հարաբերակցվում է անդեն ինֆինիտիվի, մյուս կողմից՝ բայի դիմավոր ձևերի, հատկապես՝ **պայմանականի** ձևերի հետ:

²² Տե՛ս Haase M. նշվ. աշխ., էջ 42-52:

²³ Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 180:

²⁴ Օրինակը ըստ Вольф Е. М., Никонов Б. А. Португальский язык. М., 1965, էջ 93:

²⁵ Տե՛ս Вольф Е. М., Никонов Б. А. նշվ. աշխ., էջ 93-96:

Հին նեապոլիտաներենում դիմավոր ինֆինիտիվը նույնպես հանդես է գալիս վերոհիշյալ դեպքերում, ինչպես նաև եղանակավորիչ բայերի հետ: Այստեղ կարելի է տեսնել, թե ինչպես ինֆինիտիվը ոչ քողարկված ենթակայի հետ հիմք է ծառայել դիմավոր ինֆինիտիվի ծագման համար: Այն փաստը, որ հոգնակի թվի երկրորդ դեմքի ձևը հանգում է ինֆինիտիվի հետ ձուլված ենթակա դերանվանը, թերևս ենթադրում է այս զարգացումը: Բանն այն է, որ միայն հոգնակի երեք դեմքերում է դիմավոր ինֆինիտիվն ի հայտ գալիս, ընդ որում՝ երկրորդ դեմքի վերջավորությունը (-vo) առաջացել է անձնական դերանունից, իսկ առաջին և երրորդ դեմքի ձևերը (-mo, -(o) no)՝ դիմային վերջավորություններ են²⁶:

Այսպիսով, ծագելով ոչ քողարկված ենթակա +ինֆինիտիվ կառույցից՝ դիմավոր ինֆինիտիվը լիովին փոխարինում է անդեմ ինֆինիտիվին, սակայն ի հավելումն դրա՝ ձեռք է բերում նաև անվանական հատկանիշներ՝ գրեթե վերածվելով գոյականացված երկրորդական նախադասության:

Թեև բալկանյան և դիմավոր ինֆինիտիվները ունեն որոշակի ընդհանրություններ, սակայն կան նաև տարբերություններ: Եթե բալկանյան ինֆինիտիվը ձգտում է նույն իմաստը արտահայտել բայական միջոցներով²⁷, ապա դիմավոր ինֆինիտիվը՝ և՛ բայական, և՛ անվանական:

Դիմավոր ինֆինիտիվն իմաստային առումով որոշակիորեն տարբերվում է սովորական ինֆինիտիվից՝ փոխադարձաբար փոխարինելի լինելով նրա հետ: Բալկանյան ինֆինիտիվը այլևս չի կարող փոխարինվել սովորական ինֆինիտիվով, եթե հաշվի չառնենք երկրորդ ինֆինիտիվի ծագումը, որն արդեն հաջորդում է բալկանյան ինֆինիտիվին՝ զարգանալով հիմնականում ալբաներենում և դակոռումիներենում²⁸:

Համեմատելով հնդեվրոպական լեզուներում ինֆինիտիվի ծագումը երկրորդ ինֆինիտիվի առաջացման հետ բալկանյան լեզվամիության մեջ՝ Մ. Գաբինսկին գալիս է այն եզրակացության, որ հնդեվրոպական լեզուներում բայանվան վերածումը ինֆինիտիվի հանգեցնում է անվանական կարգերի տնտեսման, իսկ բալկանյան լեզուներում պայմանական եղանակից ինֆինիտիվ անցումը (երկրորդ ինֆինիտիվ) բայական կարգերի տնտեսում է, քանի որ վերացնում է բայի դեմքի և թվի կրկնաբանությունը²⁹:

Ի տարբերություն բալկանյան ինֆինիտիվի՝ դիմավոր ինֆինիտիվը լիովին չի փոխարինել սովորական ինֆինիտիվին, թեև մոտ հազար տարի է, ինչ գոյություն ունի: Կարծում ենք՝ դրա պատճառներից մեկն էլ այն է, որ դիմավոր ինֆինիտիվը ավելի գործածական է գրական լեզվում քան ժողովրդախոսակցականում³⁰:

Ինչ վերաբերում է անորոշ դերբայով բացարձակ կառույցներին, ապա դրանք անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցներն են, որոնք ավելի հաճախ գործածվում են հին լեզուներում:

Ժամանակակից լեզուներում աստիճանաբար նրանք վերածվում են դիմավոր ձևերի, թեև կան լեզուներ, որոնք այս կամ այն կերպ պահպանել են այս կառույցի գործածության որոշ դեպքեր: Որպես կանոն պահպանվում

²⁶ Տե՛ս Haase M. նշվ. աշխ., էջ 46- 51:

²⁷ Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 183:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 54-55:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 253:

³⁰ Հմնտ. Габинский М. А. նշվ. աշխ., էջ 182 -183:

են այն դեպքերը, որտեղ անորոշը դեռևս ընկալվում է իր նախնական բառային իմաստով՝ հատկապես ներգոյականի իմաստով, ինչպես, օրինակ՝ զգացական բայերի հետ, օր.՝ **լսել, տեսնել**: Մյուս դեպքերում, ասենք ասացական բայերի հետ, անորոշը հայցականի հետ կառույցը գրեթե չի գործածվում, քանի որ այն արհեստականորեն համաբանությամբ է տարածվել այդ բայերի վրա և չի բխում անորոշի բուն իմաստից³¹: Հայտնի է, որ լեզուն աստիճանաբար ազատվում է արհեստական տարրերից:

Անորոշը հայցականի հետ (accusativus cum infinitivo) կառույցը հատուկ է լատիներենին, հին հունարենին, հին վերին գերմաներենին, հին հայերենին և այլն: Բացի լատիներենից և հին հունարենից՝ մյուս լեզուներում այն համարվում է այդ երկու լեզուների ազդեցության արդյունք: Մի կողմ թողնելով այդ լեզուներում նրա առաջացման ուղիների հարցը, որը դուրս է մեր նպատակից՝ փորձենք պարզել, թե ո՞ր լեզուներում ո՞ր կառույցներն են գերիշխում, ի՞նչ ստրուկտուրային կառույցների հետ են նրանք գործածվում, որն էլ թույլ կտա որոշակի կարծիք կազմել այս կառույցների ծագման մասին ընդհանրապես:

Այսպես, հայցականով անորոշը լատիներենում հանդես է գալիս հիմնականում ասացական, մտածական, զգացական, ցանկություն արտահայտող, թույլատրական և արգելական, ուրախական, ինչպես նաև անդեմ բայերի հետ³², իսկ հին հունարենում՝ միայն ասացական, մտածական, թույլատրական, արգելական և անդեմ բայերի³³:

Պետք է ենթադրել, որ այս կառույցի հայցականով ենթական պայմանավորված է հիմնական բայի արժույթով: Ի դեպ՝ լեզվաբանները այս երևույթի ծագման վերաբերյալ գրեթե միակարծիք են: Ըստ նրանց՝ այստեղ նույնպես գործ ունենք, այսպես կոչված, վերավերլուծության (Reanalyse) հետ, այսինքն՝ հայցական հոլովով դրված ենթական ի սկզբանե եղել է տվյալ դիմավոր բայի ուղիղ խնդիրը, օր.՝ **Jubeo eum abire** «*ես նրան հրամայում եմ հեռանալ*» նախադասության մեջ eum-ը նախապես հանդես է եկել որպես Jubeo-ի ուղիղ խնդիր³⁴:

Համանման կառույցներ կան նաև ուղղական և տրական հոլովների հետ: Ընդ որում, ուղղականով անորոշը գործածվում է կրավորական իմաստով, որը հուշում է նրա ավելի ուշ ծագումը:

Տրականի հետ անորոշը նույնպես կախված է հիմնական բայի արժույթից: Պատահական չէ, որ հայցականը անորոշի հետ կառույցները այլ լեզուներում, ինչպես, օրինակ՝ անգլերենում և սլավոնական լեզուներում, համապատասխանում են տրականով անորոշին³⁵: Սա հիմնականում վերաբերում է ասացական բայերին: Սա էլ սերտորեն կապված է տվյալ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողության հետ:

Իսկ այս կառույցների դիմավոր ձևերի վերածումը պայմանավորված է անորոշի քերականական իմաստի զարգացմամբ, որտեղ հետին պլան է

³¹ Հմմտ. **Denschewa Emilia**. Infinitivische Sätze mit explizitem Subjekt in der Bibelübersetzung (Neues Testament) von Wulfila : ein Versuch gotisches Idiom vor dem Hintergrund übersetzungstechnischer Entscheidungen abzugrenzen und zu charakterisieren/, Sofia: Universitätsverl. St. Kliment Ochridski, 2007, էջ 53:

³² **Сте́н Покровская З. А., Кацман Н. Л.** Латинский язык. М., 1987, էջ 172-173:

³³ **Сте́н Соколевский С. И.** Древнегреческий язык. М., 1948, էջ 388:

³⁴ Հմմտ. **Haspelmath M.** նշվ. աշխ., էջ 73-74:

³⁵ **Сте́н Есперсен О.** Философия грамматики. М., 1958, էջ 135:

նդվում նրա բառային իմաստը, այսինքն՝ այլևս չունենալով ներգոյակա-
նի իմաստ և ձեռք բերելով գործողության ընդհանուր անվանման ի-
մաստ՝ այն իր տեղը զիջում է դիմավոր բային: Իհարկե կան լեզուներ,
որտեղ այնուամենայնիվ պահպանվում են վերոհիշյալ կառույցները: Ու-
շագրավ է, որ նրանք հիմնականում պահպանվում են զգացական բայերի
հետ կառույցներում, ինչպես նշվեց վերը: Կան նաև լեզուներ, որոնք այդ
իմաստը արտահայտելու համար նոր ձևեր են ստեղծել, ինչպես, օրի-
նակ՝ ժամանակակից հայերենի անկատար II դերբայը:

Այլ կերպ ասած՝ դիմորոշությամբ պայմանավորված հակադրության
առաջին հայացքից թվացող չեզոքացումը պարզապես արդյունք է անորոշի
քերականացման: Եթե անորոշը հայցականի, տրականի և ուղղակա-
նի հետ կառույցների վերածումը դիմավոր ձևերի տեղի է ունենում անորոշի
քերականացման ճանապարհին, որտեղ հստակեցվում են անորոշ
դերբայի քերականական իմաստն ու գործառնությունները, ապա բալկանյան
և դիմավոր ինֆինիտիվները արդյունք են արդեն քերականացված անորոշի
զարգացման, քանի որ և՛ բալկանյան, և՛ դիմավոր ինֆինիտիվները
հաջորդում են անորոշի զարգացման շրջանին:

Այսպիսով՝ եթե համաժամանակյա կտրվածքում դիմավոր բայը կարող
է փոխարինվել անորոշով, երբ վերջինիս քողարկված ենթական և հիմնա-
կան բայի ենթական են նույնը, և անորոշ դերբայ-դիմավոր բայ հակադրու-
թյունը չեզոքանում է դիմավոր բայի օգտին, երբ ասույթի և անորոշի ենթա-
կաները տարբեր են, ապա տարածամանակյա տեսակետից նույնպես գոր-
ծում է հենց այս կանոնը, որի համաձայն դիմավոր բայի են վերածվում նաև
անորոշ դերբայով բացարձակ կառույցները, ինչպիսիք են՝ անորոշը հայցա-
կանի, տրականի և ուղղականի հետ կառույցները: Ընդ որում, պետք է նկա-
տի ունենալ, որ տարածամանակյա հայեցակետից որպես կանոն անորոշն է
վերածվում դիմավոր ձևի և ոչ թե հակառակը, քանի որ պատմական տե-
սանկյունից այն ծագում է բայարմատի հոլովված ձևերից:

Ինչ վերաբերում է բալկանյան ինֆինիտիվին, ապա այստեղ էլ հնա-
րավոր է, որ իրենց դերն են ունեցել այն կառույցները, որոնց քողարկված
ենթական տարբեր է իսկական ենթակայից, եթե հիմք ընդունենք այն տե-
սությունները, որոնց համաձայն բալկանյան ինֆինիտիվի ծագումը կապ-
ված է բացարձակ կառույցների հետ:

Այն, որ դիմավոր ինֆինիտիվի ծագման համար էլ նախադրյալ է եղել
անորոշի և ասույթի ենթակաների տարբերությունը, վկայում է այն հանգա-
մանքը, որ դիմավոր ինֆինիտիվի գործածության բոլոր դեպքերում նրա և
ասույթի ենթակաները տարբեր են: Բացի այդ՝ նրանց նույնության դեպքում
դիմավոր ինֆինիտիվ է կիրառվում միայն խոսակցական լեզվում, հատկա-
պես Բրազիլիայում³⁶, որը կարծում ենք ավելի ուշ երևութ է: Բրազիլիայում
պորտուգալերենը տարածվել է 16-րդ դարում, իսկ Պորտուգալիայում ա-
վանդված է 12-րդ դարից: Ընդ որում, արդեն 14-րդ դարում դիմավոր ինֆի-
նիտիվը սկսել է տարածում գտնել պորտուգալերենում³⁷: Ընդհանուր առ-
մամբ կիսաինֆինիտիվը գոյություն ունի ոչ պակաս քան 1000 տարի³⁸:

³⁶ Տե՛ս Вольф Е. М., Никонов Б. А. նշվ. աշխ., էջ 96:

³⁷ Տե՛ս Вольф Е. М. Формирование романских литературных языков. Португаль-
ский язык. М., 1983, с. 31. Вольф Е. М. История португальского языка. М., 1988, էջ 94:

³⁸ Տե՛ս Габинский М. А. նշվ. աշխ., էջ 232:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, այս երեք կառույցների զարգացումը ունի համանման միտումներ: Պատկանելով անորոշի զարգացման տարբեր շրջաններին և անցնելով զարգացման տարբեր ուղիներ՝ նրանք ունեն նաև մեկ շատ կարևոր ընդհանուր նախադյալ, այն է՝ ասույթի և անորոշի ենթակաների տարբերությունը:

Ինչ վերաբերում է անորոշի զարգացման արդյունքին, ապա այստեղ նույնպես կա որոշակի տարբերություն: Եթե անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցները, ինչպես նաև բալկանյան ինֆինիտիվը փոխարինվում են դիմավոր ձևերով, որոնք իրենց մեջ ունեն միայն բայական հատկանիշներ, ապա դիմավոր ինֆինիտիվը կամ կիսաինֆինիտիվը վերածվում է մի ձևի, որն ունի և՛ բայական, և՛ անվանական հատկանիշներ:

АРМИНЕ ГАГИНЯН – Тенденции развития оппозиции инфинитива и личного глагола. – Под оппозицией инфинитива и личного глагола в статье подразумевается оппозиция, возникающая при наличии финитности в качестве отличительного признака. Известно, что основная особенность неопределённой формы глагола – её нейтральность по отношению к грамматической категории лица, которая делает высказывание более обобщённым и абстрактным.

Часто оппозиция инфинитива и личного глагола зависит от такого грамматического явления, как латентное подлежащее, хотя в языковой системе наблюдается и обратная тенденция, когда инфинитив употребляется вместо личного глагола, взяв на себя его функцию. Это не означает, конечно, что неопределённая форма глагола может полностью заменить финитный глагол. Имеет место множество ограничений, связанных с распределением как личного глагола, так и инфинитива, что, в свою очередь, обусловлено валентностью и принадлежностью к семантическому полю той предикативной конструкции, для которой инфинитив выступает в качестве обязательного или необязательного актанта. В целом инфинитив имеет более ограниченные рамки употребления, чем личный глагол. Инфинитив может заменять личный глагол, когда совпадают либо латентное подлежащее инфинитива и подлежащее основного глагола, либо латентное подлежащее инфинитива и дополнение основного глагола, например, в случае трёхвалентных глаголов, требующих вместе с модальными глаголами или прямым дополнением дополнения в творительном или дательном падеже.

С диахронической точки зрения вследствие нейтрализации оппозиций инфинитива и личного глагола возникают балканский инфинитив и спрягаемый инфинитив. Наряду с этим происходит и преобразование в финитные формы конструкций неопределённой формы глагола с винительным, именительным либо дательным падежом.

Развитие этих трёх конструкций имеет аналогичные тенденции. Они принадлежат к различным этапам развития инфинитива, прошли разные направления развития и имеют очень важную общую предпосылку, а именно различие подлежащих высказывания и инфинитива.

Что касается результата развития инфинитива, то здесь также есть определённое различие. Если конструкции неопределённой формы глагола с винительным, дательным и именительным падежами, а также балканский инфинитив постепенно преобразуются в финитные формы, которые имеют только глагольные признаки, то семиинфинитив преобразуется в форму, имеющую и глагольные, и именные признаки.

ARMINE GAGINYAN - *The tendencies of the development of the opposition between infinitive and finite forms of the verb* - The paper reveals the tendencies of the development of the opposition between the infinitive and the finite form of the verb. The opposition between the infinitive and the finite form of the verb assumes the opposition conditioned by the finite form of the verb as a distinctive feature.

Quite often, the opposition between the infinitive and the finite form of the verb depends on such grammatical phenomenon as the latent subject. Though an opposite tendency is also observed in the language system when infinitive is used instead of the finite form of the verb taking on its function, this does not certainly mean that the non-finite form of the verb may completely be substituted by the finite one. There are many restrictions related to the distribution of both the finite and infinitive of the verb which in its turn is motivated by the valency and pertinence to the semantic field of that very predicative construction for which the infinitive functions as an obligatory or non-obligatory actant. Overall, the infinitive appears in a more limited framework of usage than the finite form of the verb.

From diachronic perspective, on the basis of neutralized opposition between the infinitive and the finite form of the verb rise the Balkan sprachbund and the conjugated infinitive. At the same time, the patterns of the non-finite forms of the verb in Accusative, Nominative or Dative cases grow into finite forms. The development of these three constructions proceeds in analogical tendencies.

As for the result of the development of infinitive, the difference is significant. If the patterns with the non-finite forms of the verb in Accusative, Dative and Nominative, as well as the Balkan sprachbund, grow into the finite forms that have verbal attributes only, the semi-infinitive grows into a form of both verbal and nominal features.